ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆ ԱԴՐԲԵՋԱՆ-ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1991թ. անկախություն ձեռք բերելուց հետո արաբական երկրների հետ միջպետական հարաբերությունների հաստատումը դարձավ Ադրբեջանի արտաքին քաղաքական ուղղություններից մեկը: Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ արաբական առանձին պետություններ ոչ միայն ցանկանում էին Ադրբեջանի հետ բազմակողմ հարաբերություններ հաստատել, այլև, օգտվելով ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առկա գաղափարախոսական բացից, հաստատել իրենց թե՛ քաղաքական և թե՛ կրոնական ազդեցությունը: Պատահական չէ, որ Պարսից ծոցի արաբական սուննիական միապետություններից սկսեցին Ադրբեջան ներթափանցել սուննի-սալաֆիական[1] գաղափարներ: Մերձավոր Արևելքի, այդ թվում՝ արաբական երկրների հետ հաստատված հարաբերությունների արդյունքում Ադրբեջանում ներդրվեցին ֆինանսական ծավալուն միջոցներ՝ մզկիթների նորոգման և կառուցման, կրթական և մշակութային հաստատությունների ստեղծման, կրոնական կադրերի պատրաստման, ինչպես նաև ադրբեջանցի փախստականներին օգնելու համար: Հնարավորություն տրվեց ադրբեջանցի

---

[1] Իսլամում սալաֆիականներ ասելով նկատի են առնվում այն հավատացյալները, ովքեր հետևում են բարեպաշտ նախնիների (*աս-սալաֆ աս-սալիհուն*) օրինակելի վարքին: Նրանք ձգտում են վերադառնալ դեպի ակունքները, մասնավորապես իսլամի պատմության Մադինայի շրջանը (622-632թթ.), երբ ձևավորվեց Մուհամմադ մարգարեի կողմից ղեկավարվող առաջին մուսուլմանական համայնքը՝ ումման: Գաղափարախոսությունը մերժում է վտանգավոր և անընդունելի ամեն տեսակի նորարարություն (*բիդա*), ինչը համարվում է անհավատություն (քուֆր) և ենթակա է միանշանակ մերժման ու մահապատժի:

ուսանողներին կրոնական կրթություն ստանալու արտերկրի իսլամական հայտնի կենտրոններում:

Նշենք, որ սառը պատերազմի ավարտից հետո արաբական երկրներից, հատկապես Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից, Քաթարից, կառավարական և ոչ կառավարական խողովակներով արտահանվող սալաֆիականությունն իր ներթափանցումներն ունեցավ նաև Ադրբեջանում: Ընդհանրապես կրոնական հոսանքներն Ադրբեջան էին ներթափանցում ամենատարբեր ճանապարհներով[2]: Ադրբեջանում գործում էին մեծ թվով մուսուլման, այդ թվում՝ արաբ կրոնական քարոզիչներ: Քարոզչության թիրախ էին դառնում հասարակության հիմնականում լուսանցքային և սոցիալապես խոցելի խավերը: Ադրբեջանում սուննի իսլամի արաբական մեկնաբանության՝ սալաֆիականության, տարածման համար լուրջ գործոն դարձան հենց ռուս-չեչենական պատերազմները (1994-1996թթ., 1999թ.) և ընդհանրապես Հյուսիսային Կովկասում հակառուսական ռազմաքաղաքական շարժումները, որոնց գաղափարական հենքը հիմնականում սալաֆիականությունն էր:

Հատկանշական է, որ արտաքին ազդեցությունները՝ թե՛ արաբական-սալաֆիական և թե՛ թուրքական-սուննիական ու իրանական-շիայական, նպաստեցին Ադրբեջանում իսլամի վերածննդի խթանմանը, ինչպես նաև կրոնական ծայրահեղական գաղափարների տարածմանը՝ որոշակիորեն վերաձևելով ազգային՝ տեղական իսլամը: Ամեն պարագայում Ադրբեջանի հասարակական-քաղաքական և կրոնական դաշտում առավել զգալի էր թուրքական ազդեցությունը, քանի որ Ադրբեջանն անկախությունից հետո թե՛ քաղաքական և թե՛ քաղաքակրթական առումով կողմնորոշվեց դեպի Թուրքիան: Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ 1989-2010թթ. Ադրբեջանում կառուցվել է 595 մզկիթ, որից 150-ը՝ օտար դրամաշնորհներով: Նրանցից 63-ը բաժին է ընկնում Քուվեյթին, 24-ը՝ Թուրքիային, մնացածները՝ Սաուդյան Արաբիային, Իրանին, Կատարին և այլն[3]:

---

[2] Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus, Carnegie Endowment, http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf

[3] Юнусов А., Исламская палитра Азербайджана, Институт мира и демократии, Баку, 2012, с. 13.

Հարկ է նկատի ունենալ, որ անկախությունից հետո Ադրբեջանում սկսեցին տարբեր ձևաչափերով գործել նաև իսլամական վերազգային տարաբնույթ արմատական կազմակերպությունների մասնաճյուղեր, այդ թվում՝ արաբական ծագում ունեցող: Ասվածի ապացույցն է սաուդական հովանավորություն ունեցող «Իսլամական աշխարհի լիգայի» երկու մասնաճյուղերի՝ «Փրկության» («Ալ-Իսաղա») և «Երկու սրբավայրերի» («Ալ-Հարամեյն»)՝ Ադրբեջանում ծավալած գործունեությունը[4]: Բացի այդ, հատկապես 1994թ. ռուս-չեչենական առաջին պատերազմից ի վեր Ադրբեջանի տարածքը սկսեց օգտագործվել նաև Չեչնիա և Դաղստան զենք, ֆինանսական, նյութական և այլ միջոցներ ու զինյալներ տեղափոխելու համար, որը նպաստեց «մարտնչող իսլամի» ներթափանցմանն Ադրբեջան[5]:

Արտաքին կրոնական ազդեցությունների ալիքի արդյունքում Ադրբեջանում արմատավորվեցին իսլամի առանձին ուղղություններ ու մեկնաբանություններ, իսկ պետության ազգային անվտանգության համակարգը բախվեց մի շարք վտանգների հետ, որոնք շատ դեպքերում ուղղակի կապ ունեին արաբական երկրների հետ: Խնդիրն այն է, որ անկախության առաջին շրջանում մերձավորարևելյան, այդ թվում՝ արաբական երկրների հարցում Ադրբեջանը կարծես վարում էր «բաց դռների» քաղաքականություն, որն արդյունք էր անկախությանը հաջորդած շրջանին բնորոշ քաղաքական ու սոցիալական վայրիվերումների, ղարաբաղյան պատերազմի, փախստականների և այլևայլ խնդիրների[6]:

---

[4] «Իսլամական աշխարհի լիգան» (արաբերեն՝ «*Առ-Ռաբիտա ալ-ալամ ալ-իսլամի*», կրճատ՝ *Ռաբիտա*) հիմնվել է 1962 թ. Մեքքայում Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալ իբն Աբդ ալ-Ազիզի (1964-1975 թթ.) կողմից՝ որպես ոչ կառավարական անդրազգային կազմակերպություն՝ հակազդելու արաբական աշխարհիկ ազգայնականության աճին: Կազմակերպության նպատակն իսլամի տարածումն է, իսլամական քարոզչության (*դավա*) իրականացումը, բարեգործությունը և այլն: Կազմված է ութ հիմնական մարմիններից: Առավելապես ֆինանսավորվում է Սաուդյան Արաբիայի կողմից: «Իսլամական աշխարհի լիգայի» 2001 թ. Նյու Յորքի ահաբեկչությունից հետո մեղադրվեց միջազգային ահաբեկչությանը սատարելու մեջ:

[5] А. Юнусов, նշվ. աշխ.:

[6] Heyat F., New Veiling in Azerbaijan: Gender and Globalized Islam, European Journal of Women's Studie s, 2008, vol. 15, no. 4.

Սակայն արդեն Հեյդար Ալիևի (1993-2003թթ.) իշխանության գալուց հետո պետությունը սկսեց խստորեն ու կոշտ մեթոդներով վերահսկել ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերները: Աստիճանաբար հաջողվեց կասեցնել արաբական և ոչ արաբական երկրներից կրոնական ճանապարհով արտաքին ներթափանցումների վտանգը: Արդեն 1996թ. Ադրբեջանի խորհրդարանը լրացումներ կատարեց դավանանքի ազատության մասին հոդվածում: Օտար երկրների քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց արգելվեց Ադրբեջանում կրոնական քարոզչություն ծավալել[7]:

Փաստորեն արաբական երկրների հետ Ադրբեջանի հարաբերություններում տարբեր միտումներ սկսեցին դրսևորվել: Մի կողմից Ալիևը փորձեց կասեցնել արաբական իսլամական աշխարհից եկող վտանգավոր կրոնական ներթափանցումները, մյուս կողմից առավել զգուշորեն շարունակել գործընկերությունն արաբական երկրների հետ: Դեռևս 1994թ. հուլիսին Հեյդար Ալիևը պաշտոնական այց կատարեց Սաուդյան Արաբիա՝ Էռ-Ռիադ, որի շրջանակներում նախկին կոմունիստական առաջնորդը և նրան ուղեկցող պատվիրակությունը, որի մեջ էր նաև Ադրբեջանի հոգևոր առաջնորդ շեյխ ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն, Մեքքայում «փոքր» ուխտագնացություն (ումրա)[8] կատարեցին: Հետագայում Մեքքա և Մադինա ուխտագնացության մեկնողների մեջ որոշակի տեղ սկսեցին զբաղեցնել նաև կառավարության անդամները[9]:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հանգամանքը, որ Ալիևը փորձեց ստեղծել ադրբեջանական կամ ազգային իսլամի բրենդը՝ ձգտելով մաքրել այն պարսկական, թյուրքական, արաբական և այլևայլ ազդեցություններից: Ալիևը մի կողմից ձգտում էր Ադրբեջանում զարգացնել եվրոպական փորձը, մյուս կողմից՝ սերտացնել կապերն արաբական իսլամական աշխարհի հետ: Ադրբեջանը ներկայացվում էր մի երկիր, որը կարող էր կամրջի դեր խաղալ Արևմուտքի և Արևելքի

---

[7] Hadjy-zadeh, Hikmet, Freedom of Belief in Independent Azerbaijan: Majority and Minority Problems, http://www.crvp.org/book/Series04/IVA-29/chapter-8.htm:

[8] Ումրան ենթադրում է ուխտագնացություն Մեքքա տարվա ցանկացած շրջանում, բացի հաջի օրերից:

[9] Տե՛ս Valiyev A., Azerbaijan: Islam in a Post-Soviet Republic, Middle East Review of International Affairs, 2005, 9 (4).

միջև: Իսլամը դիտարկվում էր Ադրբեջանի ազգային-հոգևոր հարստություն: Ալիևը ձգտում էր Ադրբեջանը դարձնել իսլամական աշխարհի առաջատար երկիր, նաև իսլամագիտության կենտրոն[10]:

Հատկանշական է, որ Ադրբեջանի իշխանություններն արաբական որոշ միապետությունների, այդ թվում՝ Սաուդյան Արաբիայի աջակցության շնորհիվ կարողացան շահեկանորեն օգտագործել իսլամական գործոնն արտաքին քաղաքականության մեջ: Այդ հարցում Ադրբեջանին էական օգնություն ցույց տվեց Թուրքիան: Աստիճանաբար Ադրբեջանը սկսեց ակտիվ դեր խաղալ իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնում՝ Իսլամական համագործակցություն կազմակերպությունում (ԻՀԿ, 1969-ից մինչև 2011-ը՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպություն), որի նստավայր-գրասենյակը Ջիդդայում է (Սաուդյան Արաբիա), և որտեղ հանգուցային դիրք ունեն Ծոցի արաբական միապետությունները: Ադրբեջանը ԻՀԿ-ին անդամակցելուց հետո իրեն հայտարարեց իսլամական աշխարհի կամ Ումմայի[11] անքակտելի մաս:

Բաքուն ամեն կերպ ձգտում էր ակտիվացնել համագործակցությունն արաբական աշխարհի հետ ոչ միայն միջազգային իսլամական ընտանիքի մաս դառնալու համար: Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին օգտագործել իսլամական աշխարհի, այդ թվում արաբական ներուժը Ադրբեջանից անկախացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության[12], ինչ-

[10] Аль-Фаллах, Адель Абдулла, Гейдар Алиев и национально-духовные ценности, Баку, 2007, с. 101.

[11] Իսլամի պատմության բոլոր փուլերում Ումմայի գաղափարն իդեալականացվել է, քանի որ այն ղեկավարում էր Մուհամմադ մարգարեն Աստծուց ստացած պատվիրաններով, այսինքն՝ աստվածային ծագում ունեցող օրենքներով: Մարգարեի մահվանից հետո կապն Աստծու հետ ընդհատվեց: Ումմայի ժամանակակից ընկալումն ամրագրված է Իսլամական համագործակցություն կազմակերպության՝ 1981թ. Մեքքայի գագաթաժողովի ամփոփիչ հռչակագրում: Ըստ այդմ՝ Ումման իսլամական ազգի գաղափարն է՝ անկախ նրա անդամների լեզվական, ռասայական, սոցիալական, աշխարհագրական և այլևայլ պատկանելություններից: Ըստ այդմ՝ Ումմայի անդամներին միավորում է նույն հավատքը, նրանք շարժվում են նույն ուղղությամբ, ունեն մշակութային միասնական ժառանգություն, աշխարհում ունեն նույն առաքելությունը: Տե՛ս The Mecca Declaration, The Islamic Summit Conference, Six Issue, Revised Edition, Kuwait, p. 47.

[12] Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անկախ, բայց չճանաչված

պես նաև Հայաստանի դեմ միջազգային օրակարգ ձևավորելու հարցում: Ադրբեջանի իշխանությունները 1992 թ.-ից ԻՀԿ հարթակն առավելագույնս օգտագործեցին երկրին հուզող խնդիրները բարձրացնելու, առաջին հերթին Հայաստանի դեմ քարոզչություն ծավալելու նպատակով: Հատկանշական է, որ նույն նպատակը դրվեց նաև արաբական երկրների հետ համագործակցության հիմքում:

Արաբական աշխարհի հետ Ադրբեջանի շփումները նոր փուլ մտան 2014 թ. մայիսին, երբ Արաբական պետությունների լիգան (ԱՊԼ) Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի պետությունների հետ ստորագրեց փոխհամաձայնության հուշագիր: Փաստաթուղթը ստորագրվեց «Համագործակցություն արաբական երկրների, Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև և տնտեսությունը» խորագրով Էռ-Ռիադում տեղի ունեցած հանդիպման ժամանակ[13]: Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է. Մամադյարովի կարծիքով Արաբական պետությունների լիգայի հետ Ադրբեջանի ստորագրած համագործակցության հուշագիրը որակական առումով նոր մակարդակ է ստեղծելու Ադրբեջանի և արաբական աշխարհի հետ քաղաքական, տնտեսական, մարդասիրական ոլորտներում համագործակցելու ճանապարհին՝ «մեծապես նպաստելով փոխադարձ համաձայնությանը, հարգանքին և աջակցությանը»[14]:

Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ Ադրբեջանը հետամուտ էր ծառայեցնել արաբական հարթակը ոչ միայն բազմակողմ համագործակցության, այլև՝ այլատյացության վերաճած հակահայկական քարոզչության համար: Պատահական չէ, որ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է. Մամադյարովը վերը նշված ԱՊԼ Էռ-Ռիադի հանդիպմանը ղարաբաղյան խնդրի վերաբերյալ արեց այն նույն շեշտադրումները, ինչը սովորաբար անում է Իսլամական համաժողով

պետություն է: Հռչակել է իր անկախությունը 1991թ. սեպտեմբերի 2-ին: 1991թ. դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (ԼՂԻՄ) անցկացվեց համաժողովրդական հանրաքվե: Շրջանի հայ ազգաբնակչությունը միասնական ձևով (99,8 տոկոս) կողմ քվեարկեց անկախությանը: Քվեարկության նման բարձր ցուցանիշը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԼՂԻՄ-ի ադրբեջանական համայնքը բոյկոտեց հանրաքվեն:

[13] Ties with Arab League member states important for Azerbaijan: FM, http://www.azernews.az/azerbaijan/67058.html.

[14] Նույն տեղում:

կազմակերպությունում[15]: Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնատարն արաբական հանդիպմանը բարձր գնահատեց ոչ թե արաբական աշխարհի, այլ իսլամական աշխարհի օգնությունն Ադրբեջանին Հայաստանին դատապարտելու հարցում. «Մենք հայտնում ենք մեր անկեղծ երախտագիտությունն իսլամական Ումմային նրա տևական դիրքորոշման համար»: «Մենք հավատում ենք, որ Հայաստան-Ադրբեջան հակամարտության հետ կապված այս դիրքորոշումը կորդեգրվի նաև Արաբական լիգայի մեր եղբայր պետությունների կողմից»[16]:

Հարկ է փաստել, որ արաբական հանդիպումների ընթացքում Ադրբեջանի պաշտոնատարներն էապես կարևորում են արաբական երկրների հետ համագործակցությունը՝ համարելով, որ արաբական աշխարհի հետ Ադրբեջանն ունի պատմական, կրոնական և մշակութային կապեր[17]:

Հարկ է նկատի ունենալ, որ չնայած Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեջանն ակնկալում է արաբական իսլամական աշխարհի անվերապահ աջակցությունը, սակայն այս խնդիրն աշխարհաքաղաքական հիշյալ հարթության մեջ չունի այնպիսի նշանակալից հնչեղություն, ինչպես շատ այլ խնդիրներ: Ասվածի ապացույցն է նաև այն փաստը, որ արաբ առաջնորդները միջազգային հարթակներում շատ հազվադեպ են անդրադառնում Լեռնային Ղարաբաղի խնդրին: Այս տեսանկյունից հետաքրքիր է 2012 թ. Արաբական պետությունների

[15] Ադրբեջանական հռետորականությունը ղարաբաղյան հարցում անփոփոխ է: Ըստ այդմ՝ «Հայաստանը «բռնազավթել» է Ադրբեջանի տարածքի քսան տոկոսը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը՝ իրականացնելով էթնիկ զտումներ»: «Գրավյալ տարածքներում» և Հայաստանում ադրբեջանական պատմական և մշակութային հուշարձաններն ավերվել են, ինչը խիստ վիճարկելի է: Նշված հուշարձանների հիմնական մասն, ի դեպ, պարսկական ծագում ունի: Հատկանշական է, որ ադրբեջանցիներն իրենք են ականատես եղել Շուշիում գտնվող մուսուլմանական հուշարձանների բարվոք վիճակին, երբ 2009թ. հուլիսին հայ-ադրբեջանական «ժողովրդական դիվանագիտության» շրջանակներում ադրբեջանցի քաղաքական և մշակութային մի շարք գործիչներ իրենց հայ գործընկերների հետ (պատվիրակությունների կազմում էին Ռուսաստանում Հայաստանի և Ադրբեջանի դեսպաններ Արմեն Սմբատյանն ու Փոլադ Բյուլբյուլօղլին) այցելեցին Լեռնային Ղարաբաղ:

[16] Ties with Arab League member states important for Azerbaijan: FM, http://www.azernews.az/azerbaijan/67058.html

[17] Նույն տեղում:

լիգայի եվրոպական վարչության տնօրեն Օմնիյա Տահայի դիտարկումը: Ադրբեջանցի լրագրողի այն հարցին, թե իսլամական աշխարհը՝ Ումման, ղարաբաղյան խնդրի շուրջ ՄԱԿ-ում միասնական դիրքորոշում չունի, նա նշել է բառացիորեն հետևյալը. «Ես հասկանում եմ ձեր հիասթափությունը, որովհետև մի շարք արաբական երկրներ ձեզ չեն աջակցում: Կարծում եմ, որ (ղարաբաղյան հարցը- Ա.Փ.) Ումմայի հարցը չէ, այլ պետությունների միջև հետաքրքրությունների հարց է...»[18]: Նշենք, որ ԱՊԼ-ն կոչ է անում ղարաբաղյան հակամարտությունը լուծել խաղաղ ճանապարհով, ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

Այսպիսով, հետանկախության շրջանում արաբական երկրներից եկող կրոնական ներթափանցումներն ու ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերները կանխելուց հետո Ադրբեջանը ձեռնամուխ եղավ արաբական երկրների հետ հարաբերությունների սերտացմանը: Արաբական մի շարք պետությունների հետ Ադրբեջանին հաջողվեց կնքել քաղաքական, առևտրական և տնտեսական պայմանագրեր: Մյուս կողմից 2011թ. սկսված «արաբական գարնան» դեպքերը նոր խնդիրներ ստեղծեցին Ադրբեջանի համար, որն ուներ մարդու իրավունքների և խոսքի ազատության խնդիրներ: Սկսեցին ավելի ու ավելի հաճախ խոսել այն մասին, որ Ադրբեջանում կարող է նկատվել իսլամական գործոնի ակտիվացում, կամ էլ «արաբական գարունը» կարող է տեղափոխվել Ադրբեջան[19]: Հընթացս միջազգային ջիհադական-ահաբեկչական շարժումներին անդամագրվեցին բազմաթիվ ադրբեջանցի մոջահիդներ, որոնք սկսեցին մասնակցել Սիրիայում տեղի ունեցող ռազմական գործողություններին: 2013 թ.-ից ադրբեջանական և միջազգային լրատվամիջոցները սկսեցին ավելի հաճախ տեղեկություններ հրապարակել Սիրիայում կռվող ադրբեջանցի զինյալների մասին[20]: Ի դեպ, ադրբեջանական հասարակական կարծիքը խիստ բացասաբար արձագանքեց նշված փաստին: Սիրիայում կռվող ադրբեջանցիների թեմային անդրադարձավ նաև հոգևոր դասը: Շեյխ ուլ-իսլամ Փաշազադեն

---

[18] News.az interviews Omnia M. Taha, Director of the Arab League's European Department, http://www.news.az, (19.03. 2012).

[19] **Փաշայան Ա.**, «Արաբական սցենարի» հավանականությունն Ադրբեջանում, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, http://www.noravank.am, (05.04.2011).

[20] RovshenogluK.& BalciB., Syria, AzerbaijanandtheSunni-ShiaDividem, TheGlobalist (06. 09. 2013).

հայտարարեց, որ Ադրբեջանում սխալ պատկերացումներ կան հավատքի պատերազմի՝ ջիհադի և նահատակության՝ շահիդականության մասին: 2014 թ. հունվարի վերջին Կովկասի մուսուլմանների վարչության կադիների խորհուրդը հրապարակեց ֆեթվա, որտեղ ամրագրվեցին ոչ միայն շահիդ հասկացության սահմանները, այլև արաբական երկրներում կռվող ադրբեջանցիների ոչ շահիդ լինելու հանգամանքը[21]: Ադրբեջանում փաստորեն լուրջ մտավախություն կար, որ արաբական երկրներում առկա ճգնաժամը և դրանցում Ադրբեջանի քաղաքացիների ներգրավվածությունը կարող են նպաստել այդ երկրում կրոնական արմատական տրամադրությունների ընդլայնմանը[22]:

Այսպիսով, իսլամական գործոնը կարևոր տեղ զբաղեցրեց Ադրբեջան-արաբական աշխարհ հարաբերություններում: Մի կողմից Ադրբեջանը սկսեց համագործակցել արաբական մի շարք երկրների հետ, մյուս կողմից՝ զգուշանալ արաբական երկրներից ներթափանցող կրոնական և կրոնաքաղաքական ազդեցություններից: Մեկ այլ դեպքում Ադրբեջանն օգտագործեց արաբական հարթակը՝ ղարաբաղյան հարցում աջակցություն ստանալու համար՝ կիրառելով Իսլամական համաժողով կազմակերպության փորձը:

[21] Фетва УМК по уезжающим воевать в Сирию, http://www.radioazadlyg.org, (28. 01. 2014).

[22] Ի դեպ, Սիրիայում կռվող ադրբեջանցիների հիմնահարցին արձագանքելով՝ Ադրբեջանի խորհրդարանը 2014 թ. մարտին քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարեց, համաձայն որի՝ խստացան պատիժները վարձկանության և ահաբեկչության համար: Վարձկանության հոդվածով անցնողներն Ադրբեջանի նոր օրենքով կդատապարտվեն 8-12, ահաբեկչության հոդվածով անցնողները՝ 10-15 տարվա ազատազրկմամբ: